ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐԱԲԱԿ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ գ. Դպրաբակ

Ե- 22

Հեռ. / +374/94-00-71-79
E-mail `Dprabaki-Dproc@rambler.ru
22 մարտի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ.ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սանոսյան

Ի կատարումն Կրթության և գիտության նախարարի N 396-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթ»-ի կարգի 12-րդ կետի տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դպրաբակ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում «Դասվար»՝ տասներկու դասաժամ ուսուցչի թափուր տեղի համար հայտարարությունը հրապարակվել է «Կրթություն» շաբաթաթերթի 2021 թվականի մարտի 17-ի թիվ 12-13(985-986) համարում:
Ուսուցչի թափուր տեղը համալրելու համար մրցույթը տեղի կունենա 2021 թվականի ապրիլի 1-ին ժամը 14:00-ին Գեղարքունիքի մարզի Դպրաբակ գյուղի միջնակարգ դպրոցում: Հայտարարության տեքստը տեղադրվել է դպրոցի և ԿԳՍՄ պաշտոնական կայք էջերում:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը :
Առդիր մեկ էջ:

Տնօրեն Digitally signed by KHONDKARYAN ANTARAM 7012600438 Date: 2021.03.22 Ա Խոնդկարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Դպրաբակ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ դասվարի (12 դասաժամ) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձեւ 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչև մարտի 30-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 1-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Դպրաբակի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Դպրաբակ, փ.1, շ.23 :

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094)007179 հեռախոսահամարով: